

Ծանուցում՝ Ծնողի/Խնամակալի/Փոխարինողի

Ընթացակարգային Երաշխիքներ, Ծնողական
Իրավունքներ և Դիտրիքթի Մասնակցությունը՝
Բժշկական Հաշվարկների Ծրագրում



Pasadena Unified School District
Special Education Local Plan Area
351 South Hudson Ave
Pasadena, CA 91101
626/396-3600 ext. 88600

Սա ձեր իրավունքների հայտարարությունն է:
Խնդրեմ պահեք այս փաստաթուղթը ապագային
պետք ունենալու դեպքում:

Հատուկ Ուսուցման՝ Ծնողների և Երեխաների Իրավունքները
Ըստ՝ Հաշմանդամ Անհատների Ուսուցման Օրենքի, Մաս B,
և Քալիֆորնիայի Ուսման Օրենքին

Ընթացակարգային Երաշխիքների Ծանուցում
CDE Revision October 2016

ՆՇՈՒՄ. «Դպրոցի Դիսթրիքթ» (School District) տերմինը այս փաստաթղթում գործածվել է նկարագրելու որևէ հանրային ուսումնական հիմնարկ, որը պատասխանատու է ձեռք բերելու տալու հատուկ ուսուցման (Special Education) ծրագիր: «Գնահատում» (Assessment) տերմինը գործածվել է նշանակելու ստուգում կամ քննություն: Այս ծանուցումում մեջբերվել են դաշնային և նահանգային օրենքներ՝ նրանց Անգլերեն հապավումներով, որոնք բացատրվել են այս ծանուցումի վերջին էջում գտնված բառարանում:

Ի՞նչ է Ընթացակարգային Երաշխիքների Ծանուցումը:

Այս տեղեկությունը տրվում է ձեզ որպես ծնող, օրինական խնամակալ, և փոխարինող ծնող, երեք (3) տարեկանից մինչև քսանմեկ (21) տարեկան հաշմանդամ երեխաների, ինչպես նաև աշակերտների համար ովքեր տասնութ (18) տարեկան են դարձել, այսինքն մեծամասնության տարիք (այսուհետև կկոչվի «ծնող»), ձեզ տալով մի ընդհանուր ակնարկ ձեր ուսումնական իրավունքների և ընթացակարգային երաշխիքների մասին:

Ընթացակարգային Երաշխիքների Ծանուցումը պահանջվում է Հաշմանդամ Անհատների Ուսումնական Օրենքի համաձայն (Անգլերենով դա կոչվում է IDEA) և դա պետք է ձեզ հայայթվի երբ՝

Դուք պահանջում եք մի օրինակ,

Երբ ձեր երեխան առաջին անգամ ուղարկվում է հատուկ ուսուցումի (*սիեշլ էսյուքեշըն*) համար ստուգվելու,

Յուրաքանչյուր անգամ որ ձեզ ստուգման ծրագիր է ներկայացվում ձեր երեխային գնահատելու համար,

Առաջին անգամ Նահանգից կամ իրավական գանգատ ստանալուց հետո՝ մեկ տարեշրջանում, և

Երբ հեռացնելու որոշում է կայացվում, որը համարվում է տեղադրումի փոփոխություն:

(20 USC 1415[d]; 34 CFR 300.504; EC 56301[d] [2], EC 56321, and 56341.1[g] [1])

Ի՞նչ է Հաշմանդամ Անհատների Կրթության Օրենքը (IDEA):

IDEA-ն դաշնային պետական օրենք է որը պահանջում է դպրոցական դիսթրիքթներից, հայայթել «ձրի ու համապատասխան հանրային կրթություն» (Անգլերենով դա կոչվում է FAPE), իրավասու հաշմանդամ երեխաների համար: Ձրի ու համապատասխան հանրային կրթություն նշանակում է որ այդ հատուկ ուսուցումը և առնչված սպասարկությունները պետք են հայայթվել ըստ անհատական ուսումնական մի ծրագրի (Անգլերենով դա կոչվում է IEP) և դա ձրիաբար տրվում է ձեր զավակին՝ հանրային հսկողության տակ:

Ես կարո՞ղ եմ իմ երեխայի կրթական որոշումներին մասնակցել:

Ձեզ պետք է առիթ տրվի մասնակցելու որևէ որոշում կայացնելու ժողովներին՝ ձեր զավակի հատուկ ուսուցումի ծրագրի հետ առնչված: Դուք իրավունք ունեք մասնակցելու IEP-ի խմբային ժողովներին առնչված ձեր զավակի հասանելիության, ստուգման, կամ ուսումնական տեղադրման հարցերում և այլ հարցերում որոք առնչվում են ձեր զավակի FAPE-ին: (20 USC 1414[d] [1]B–[d][1][D]; 34 CFR 300.321; EC 56341[b], 56343[c])

Ծնողը կամ խնամակալը, կամ էլ տեղական ուսումնական մարմինը (LEA) իրավունք ունեն մանակցելու IEP ծրագրի մշակումին, և ցուցաբերեն իրենց մտադրությունը՝ որ ցանկանում են էլեքթրոնային միջոցներով ձայնագրել IEP-ի խմբի ժողովների ընթացքը: Ժողովից առ նվազն 24 ժամ առաջ, ծնողը կամ խնամակալը պետք է IEP-ի անդամներին տեղեկացնի որ նպատակ ունի ձայնագրել ժողովը, LEA-ին իրավունք տալով ձայնագրելու ժողովը: Եթե ծնողը կամ խնամակալը չի համաձայնվում որ LEA-ն ձայնագրի IEP ժողովը, ժողովը չի կարող ձայնագրվի ձայնագրիչ որևէ գործիքով:

Ձեր իրավունքներին մաս է կազմում FAPE-ի առկայության մասին տեղեկություն, ներառյալ բոլոր ծրագրերի տարբերակները, և բոլոր առկա այլ ծրագրեր, թե հանրային թե ոչ հանրային: (20 USC 1401[3], 1412[a][3]; 34 CFR 300.111; EC 56301, 56341.1[g][1], and 56506)

Որտեղի՞ց կարող եմ հավելյալ օգնություն ստանալ:

Երբ դուք ձեր զավակի ուսման մասին մտահոգություն ունեք, կարևոր է որ կապվեք ձեր զավակի ուսուցիչին կամ կառավարիչին՝ խոսելու ձեր զավակի մասին կամ որևէ այլ դժվարությունների մասին որ նկատում եք: Ձեր դպրոցի դիսքրիքթում կամ հատուկ ուսուցման տեղական ծրագրավորման շրջանի աշխատակազմը (SELPA) կարող է ձեր զավակի ուսման մասին հարցերին պատասխանել, ինչպես նաև ձեր իրավունքների, և ընթացակարգային երաշխիքների մասին: Նաև, երբ դուք մտահոգություն ունեք, այն անպաշտոն խոսակցությունը հաճախ լուծում է շատ մը հարցեր և օգնում է բաց հաղորդակցումի պահպանումը:

Դուք կարող է նաև ուզենաք կապվել Քալիֆորնիայի ծնողական կազմակերպություններից մեկին (Family Empowerment Centers և Parent Training Institutes) որոնք ստեղծվել են ծնողների և մանկավարժների գործակցությունը բարելավել, որպեսզի ուսումնական համակարգը բարելավվի: Այս կազմակերպությունների հետ կապվելու տեղեկությունները գտնվում է CDE-ի հատուկ կրթության Քալիֆորնիայի Ծնողական Կազմակերպության կայքէջում՝ <http://www.cde.ca.gov/sp/se/qa/caprntorg.asp>.

Հավելյալ ռեսուրսներ կան այս փաստաթղթի վերջում՝ որպեսզի հասկանաք ընթացակարգային երաշխիքները:

Ի՞նչ անել եթե իմ երեխան խուլ է, դժվար է լսում, կույր է, տեսողության դժվարություն ունի, կամ խուլ և կույր է:

Նահանգի Հատուկ Դպրոցները (State Special Schools) խուլ, դժվար լսող, կույր, տեսողության դժվարություն ունեցող, կամ խուլ և կույր աշակերտներին սպասարկություններ հայթայթում է երեք վայրերում. California Schools for the Deaf-ում (խուլերի համար)՝ Fremont և Riverside քաղաքներում, California School for the Blind (կույրերի համար)՝ Fremont-ում: Գիշերօթիկ և ցերեկյա դպրոցական ծրագրեր առաջարկվում են մանուկ տարիքից մինչև 21 տարեկան՝ երկու State Schools for the Deaf-երում: Այդպիսի ծրագրեր նաև արաջարկվում են հինգ տարեկանից մինչև 21 տարեկան աշակերտներին՝ California School for the Blind-ում: The State Special Schools-ը նաև հայթայթում է գնահատման սպասարկություններ և տեխնիկական օգնություն: State Special Schools-ի մասին հավելյալ տեղեկությունների համար, խնդրեմ այցելեք California Department of Education (CDE)-ի կայքէջը՝ <http://www.cde.ca.gov/sp/ss/> կամ էլ հավելյալ տեղեկություններ ուզեք ձեր զավակի IEP-ի խմբից:

Ծանուցում, Համաձայնություն, Գնահատում, Փոխանորդ Ծնողք, Ժամադրություն, և Ռեկորսների Ձերբերում

Նախապես Գրավոր Ծանուցում

Ե՞րբ ծանուցումի կարիք կա:

Այս ծանուցումը պետք է տրվի երբ դպրոցի դիսթրիքթը առաջարկում է կամ մերժում է նախաձեռնել փոփոխություն՝ հայտնաբերելու, գնահատելու, կամ ուսումնապես տեղադրելու համար ձեր զավակը իբր հատուկ կարիքներ ունեցողների ծրագրում, կամ հայթայթել ձրի, համապատասխան հանրային ուսում: (20 USC 1415[b][3] and (4), 1415[c][1], 1414[b][1]; 34 CFR 300.503; EC 56329 and 56506[a])

Դպրոցական դիսթրիքթը պետք է ձեզ գրավոր տեղեկացնի ձեր զավակի համար առաջարկված գնահատումների մասին, կամ գնահատումի ծրագրերի մասին՝ ձեր զավակը գնահատելու ձեր գրավոր պահանջարկից հաջորդող տասնհինգ (15) օրերի ընթացքում: Ծանուցումը պետք է լինի հասկանալի և լինի ձեր մայրենի լեզվով կամ էլ մի այլ հաղորդակցման միջոցով, բացի այն պարագային որ դա կարելի չէ: (34 CFR 300.304; EC 56321)

Ծանուցումը ի՞նչ է ասելու ինձ:

Գրավոր Ծանուցումը պետք է ներառի հետևյալները՝

1. Դպրոցի դիսթրիքթի առաջարկված կամ մերժված քայլերի բացատրությունը
2. Բացատրություն թե ինչու այդ քայլը առաջարկվել է կամ մերժվել
3. Բացատրություն՝ յուրաքանչյուր գնահատումի ընթացակարքների, ռեկորդների, կամ զեկույցների որոնք գործակալությունը իբր հիմք է գործածել առաջարկված կամ մերժված քայլերի համար:
4. Հայտարարություն՝ որ հաշմանդամ երեխաների ծնողները ունեն պաշտպանություն, ընթացակարգային երաշխիքների համաձայն:
5. Աղբյուրներ ծնողների համար, որ կարողանան կապվել օգնություն ստանալու համար այս բաժնի օրենքները հասկանալու համար:
6. Բացատրություն այլ կարելիությունների մասին որ IEP-ի խումբը հաշվի է առել և պատճառները որոք նրանք մերժվել են, և
7. Բացատրություն որևէ այլ գործոնների, որոնք առնչված են առաջարկված կամ մերժված քայլերին: (20 USC 1415[b][3] and [4], 1415[c][1], 1414[b][1]; 34 CFR 300.503)

Ծնողական Թույլտվություն

Գնահատումի համար, ե՞րբ կարիք կա իմ թույլտվության:

Դուք իրավունք ունեք ձեր երեխային տեղադրել հատուկ ուսուցման սպասարկությունների: Դուք պետք է գիտակից, գրավոր իրավասություն տաք նախքան ձեր զավակի առաջին հատուկ ուսուցման գնահատումը կարելի լինի ընդհանալ: Ծնողը որոշում կայացնելու համար առնվազն տասնհինգ (15) օր ունի՝ այն օրից երբ նա ստանում է առաջարկված գնահատումի ծրագիրը:

Գնահատումը կարող է սկսվել թույլտվությունը ստանալուց անմիջապես հետո և պետք է ամբողջացվի և IEP ծրագիր պետք է ստեղծվի ձեր թույլտվությունից հաջորդող վաթսուն (60) օրերի ընթացքում:

Սպասարկությունների համար, իմ իրավասության կարիքը ե՞րբ կա:

Դուք պետք էք գիտակից, գրավոր իրավասություն տալ նախքան դպրոցի դիսթրիքթը կարողանա ձեր զավակին հայթայթել հատուկ կրթություն և համապատասխան սպասարկություններ:

Ի՞նչպիսին է ընթացքը՝ երբ ծնողը թույլտվություն չի տալիս:

Եթե դուք գնահատումի թույլտվություն չեք տալիս, կամ չեք պատասխանում թույլտվության խնդրագրին, դպրոցի դիսթրիքթը կարող է նախնական գնահատում հետապնդել, օրինական միջոցների դիմելով:

Եթե դուք մերժեք թույլտվություն տալ նախնական սպասարկությունների համար, դպրոցի դիսթրիքթը չի կարող հատուկ կրթություն և համապատասխան սպասարկություններ հայթայթել, և չի կարող հատուկ կրթություն հետապնդել օրինական միջոցներով:

Եթե դուք գրավոր համաձայնություն տաք հատուկ կրթության և համապատասխան սպասարկություններին ձեր երեխայի համար, բայց չեք համաձայնվում IEP-ի բոլոր մասերին, ծրագրի այն մասերին որ համաձայն էք, կկատարվեն առանց ուշացումի:

Եթե դպրոցի դիսթրիքթը որոշում է որ առաջարկված հատուկ կրթության ծրագրի այն մասերին որոնց դուք համաձայն չեք բայց դրանք անհրաժեշտ են ձեր և համապատասխան ուսում տալու ձեր զավակին, օրինական մի ընթացք պետք է նախաձեռնվի: Եթե օրինական լում է տեղի ունենում, այդ լսումի որոշումները կլինեն վերջնական և պարտադիր:

Վերանայելու պարագային, դպրոցի դիսթրիքթը պետք է արձանագրի ընդունելի բոլոր քայլերը՝ որ վերցրել է ձեր համաձայնությունը ստանալու համար: Եթե դուք չպատասխանեք, դպրոցի դիսթրիքթը կարող է վերագնահատում կատարի առանց ձեր համաձայնության: (20 USC 1414[a][1][D] and 1414[c]; 34 CFR 300.300; EC 56506[e], 56321[c] and [d], and 56346).

Ե՞րբ կարող եմ հետ վերցնել թույլտվությունս:

Եթե որևէ ժամանակ՝ հատուկ ուսուցման և համապատասխան սպասարկությունների նախնական կիրառումներից հետո, երեխայի ծնողը գրավոր հետ է վերցնում թույլտվությունը՝ հատուկ ուսուցման և համապատասխան սպասարկությունների շարունակությունը, հանրային մարմինը՝

1. Չի կարող շարունակել հատուկ ուսուցում և համապատասխան սպասարկություններ տալ երեխային, սակայն այդ սպասարկությունները դադարեցնելուց առաջ, պետք է ներկայացնի գրավոր տեղեկագիր ըստ 34 CFR Section 300.503.
2. Չի կարող գործընթացներ գործածել որոնք գտնվում են ենթաբաժանում E-ում, Part 300 34 CFR (ներառյալ միջնորդության ընթացք ըստ 34 CFR Section 300.506-ի, կամ օրինական ընթացքներ 34 CFR Sections 300.507-ից մինչև 300.516) որպեսզի ստանա

- համաձայնություն կամ որոշում որ երեխայի սպասարկությունները հայթայթվեն.
3. Օրենքը խախտած պիտի չլինի՝ երեխային հայթայթելու ձրի և համապատասխան հանրային ուսուցում (FAPE), որովհետև նա երեխային չի հայթայթել հավելյալ հատուկ ուսուցում և համապատասխան սպասարկություններ.
 4. Ստիպված չէ IEP խմբի ժողով կայացնելու կամ երեխայի համար IEP մշակելու՝ ըստ 34 CFR Sections 300.320 և 300.324, հատուկ ուսուցման և համապատասխան սպասարկությունների համար:

Խնդրեմ նկատի ունեցեք որ, ըստ 34 CFR Section 300.9 (c)(3), եթե ծնողները գրավոր հետ են վերցնում իրենց թույլտվությունը իրենց զավկին հատուկ ուսուցման հետ կապակցությամբ, երեխան նախապես հատուկ ուսուցում և համապատասխան սպասարկություններ ստանալուց հետո, հանրային մարմինը ստիպված չէ փոփոխել երեխայի ուսումնական ընկերությունը, ջնջելու համար որևէ նշում՝ որ երեխան ստացել է հատուկ ուսուցում և համապատասխան սպասարկություններ՝ թույլտվությունը հետ վրեցվելու պատճառով:

Փոխարինող Ծնողի Նշանակում

Ի՞նչ կպատահի եթե ծնողը չի բացահայտվում կամ չի գտնվում

Դպրոցի դիսթրիքթները պետք է ապահովեն որ երբ հաշմանդամ մի երեխայի ծնողը չի հայտնվում կամ էլ դպրոցի դիսթրիքթը չի կարող գտնել ծնողը, մի անձ նշանակվի ծնողների փոխարեն որպես փոխանորդ ծնող:

Փոխանորդ ծնող նաև կարող է նշանակվել եթե երեխան միայնակ անտունի երիտասարդ է, դատական որոշումով կախյալ է, կամ էլ դատարանի հսկողության տակ է ըստ նահանգի Welfare and Institution Code օրենքին, և ուղարկվել է հատուկ ուսուցումի կամ արդեն իսկ ունի IEP: (20 USC 1415[b][2] ; 34 CFR 300.519; EC 56050; GC 7579.5 and 7579.6)

Ոչ-խտրականության Գնահատում

Հատուկ Ուսուցման համար ինչպե՞ս է իմ երեխան գնահատվում:

Դուք իրավունք ունեք որ ձեր զավակը գնահատվի հաշմանդամության բոլոր բնագավառներում: Բոլոր նյութերը և ընթացքները որոնք գործածվում են գնահատումի և տեղադրումի նպատակով, պետք չեն խտրականություն դնեն՝ ձեզային, մշակութային կամ սեռային կողմնորոշումի վրա:

Գնահատումի նյութերը պետք են հայթայթվել և քննությունը պետք է անցկացվի ձեր զավակի մայրենի լեզվով կամ հաղորդակցումի միջոցով, և այն ձևերով՝ որոնք պիտի լավագույն արդյունքը դրսևորեն թե երեխան ինչեր է իմանում և կարող է անել ուսումնական զարգացման և գործարկների հետ կապված, բացի այն պարագային, երբ հստակօրեն երևում է որ դա կարելի չէ:

Ոչ մի հատուկ ընթացք ձեր զավակի համար պետք է լինի միակ միջոցը իրավասություն

որոշելու և FAPE մշակելու համար: (20 USC 1414[b][1]–[3], 1412[a][6][B]; 34 CFR 300.304; EC 56001[j] and 56320)

Ուսումնական Անկախ Գնահատումներ

Կարո՞ղ է իմ երեխան անկախ ստուգվել դիսթրիքթի հաշվին:

Եթե դուք համաձայն չեք դպրոցի դիսթրիքթի կատարած գնահատումի արդյունքներին, իրավունք ունեք պակասջելու և ստանալու ուսումնական անկախ գնահատում ձեր զավակի համար, այն անձի կողմից, որը իրավասություն ունի գնահատումներ անել հանրության ծախսով:

Հանրության ծախսով, ծնողին հասնում է միմիայն մեկ ուսումնական անկախ գնահատում, ամեն անգամ որ հանրային մարմինը գնահատում է կատարում որին ծնողը չի համաձայնվում:

Դպրոցի դիսթրիքթը պետ է ուսումնական անկախ գնահատումի ձեր խնդրանքին պատասխանի և տեղեկություն հայթայթի՝ որտեղից ուսումնական անկախ գնահատում ստանալ:

Եթե դպրոցի դիսթրիքթը հավատում է որ դիսթրիքթի գնահատումը ճիշդ է և չի կարծում որ անկախ գնահատումի կարիքը կա, դպրոցի դիսթրիքթը պետք է պահանջի օրինական լսում որպեսզի կարողանա փաստել որ իր գնահատումը ճիշդ է: Եթե դիսթրիքթը հաղթի, դուք դեռ ևս իրավունք ունեք անկախ գնահատումի, բայց ոչ հանրության հաշվին: IEP-ի խումբը պետք է անկախ գնահատումների արդյունքները հաշվի առնի:

Դիսթրիքթի գնահատումի ընթացակարգերը արտոնում են որ աշակերտը դասարանում ուսումնասիրվի: Եթե դպրոցի դիսթրիքթը ուսումնասիրում է ձեր զավակին իր դասարանում գնահատումի ժամանակ, կամ էլ եթե դպրոցի դիսթրիքթը իրավունք պիտի ունենար ձեր զավակին ուսումնասիրել իր դասարանում, անկախ ուսումնական գնահատում կատարող որևէ անձ նյունպես պետք է իրավունք ունենա ձեր զավակին ուսումնասիրել իր դասարանում:

Եթե դպրոցի դիսթրիքթը առաջարկում է նոր դպրոցական միջավայր ձեր զավակի համար և ուսումնական անկախ գնահատում է տեղի ունենում, անկախ գնահատողին պետք է նախապես իրավունք տրվի, որ նոր միջավայրը ուսումնասիրի: (20 USC 1415[b][1] and [d][2][A]; 34 CFR 300.502; EC 56329[b] and [c])

Դպրոցական Ռեկորտների Առկայությունը

Ես կարո՞ղ եմ իմ երեխայի դպրոցական ռեկորտները ստուգել:

Դուք իրավունք ունեք ստուգելու և ուսումնասիրելու ձեր երեխայի բոլոր դպրոցական ռեկորտները առանց անտեղի ուշացումի, ներառյալ՝ ձեր զավակի IEP-ի ժողովից կամ օրինական լսումից առաջ: Դպրոցի դիսթրիքթը ձեզ պետք է ցույց տա բոլոր ռեկորտները և պատճենները, եթե դրանք պահանջվել են, պահանջը բանավոր կամ գրավոր ներկայացվելուց հաջորդող հինգ աշխատանքային օրերի ընթացքում: (EC 49060, 56043[n], 56501[b][3], and

Ի՞նչպես են Վեճերը Լուծվում

Օրինական Լսում

Ե՞րբ կարելի է օրինական լսում ունենալ:

Դուք իրավունք ունեք պահանջելու չեզոք օրինական լսում ձեր զավակի ինքնության, գնահատումի և ուսումնական տեղադրումի մասին, կամ էլ FAPE-ի օրենքների մասին: Օրինական լսումի պահանջը պետք է ներկայացվի երկու տարվա ընթացքում, այն թվից երբ դուք իմացել եք կամ պետ էիք իմացած լինել՝ մեղադրված արարքի մասին, որը հիմք է կազմում օրինական լսումի գանգատին: (20 USC 1415[b][6]; 34 CFR 300.507; EC 56501 and 56505[1])

Միջնորդություն և Խնդիրներ Լուծելու Այլ Միջոցներ

Ես կարո՞ղ եմ միջնորդություն կամ խնդիրներ լուծելու այլ միջոցներ պահանջել:

Միջնորդության պահանջը պետք է ներկայացվի օրինական լսումի պահանջ ներկայացվելուց կամ առաջ, կամ հետո:

Դուք կարող եք դպրոցի դիսթրիքթից խնդրել որ խնդիրը լուծվի միջնորդությամբ կամ խնդիրներ լուծելու այլ միջոցներով (ADR), որոնք ավելի քիչ թշնամական հանգամանք ունեն օրինական լսումներից: ADR-ը և միջնորդությունը խնդիրներ լուծելու կամավոր միջոցներ են և չեն կարող գործածվել հետաձգելու ձեր օրինական լսումի իրավունքը:

Ի՞նչ է լսումից առաջ միջնորդության ժողովը:

Դուք կարող եք միջնորդության միջոցով լուծում փնտրել՝ նախքան օրինական լսումի պահանջ ներկայացնելը: Ժողովը անպաշտոն մի ընթացք է, որը տեղի է ունենում ոչ թշնամական ձևով, լուծելու երեխայի ինքնության, գնահատումի կամ ուսումնական տեղադրմանը հետ առնչված հարցեր, կամ էլ FAPE-ի:

Նախալսումի միջնորդության ժողովում, ծնողը կամ դպրոցի դիսթրիքթը կարող են ընկերակցվել և խորհրդակցվել ոչ-իրավաբան ներկայացուցիչների կողմից, իսկ իրավաբանների հետ, կարող են խորհրդակցել կամ ժողովից առաջ կամ էլ հետո: Մակայն, նախալսում պահանջելը կամ մասնակցելը նախապայմաններ չեն օրինական լսում պահանջելու համար:

Նախալսումի միջնորդության բոլոր պահանջները պետք են ներկայացվել Վերակացուին: Նախալսումի միջնորդություն պահանջող կողմը (այն որ գրավոր պահանջք է ներկայացրել Վերակացուին), պետք է դեմի կողմին ներկայացնի պահանջքի պատճենը՝ պահանջքը ներկայացնելու նույն ժամանակ:

Նախալսումի միջնորդության ժողովի օրը պետք է նշանակվի Վերակացուին միջնորդության պահանջքը ստանալուց հաջորդող տասնհինգ (15) օրերի ընթացքում, և պետք է ավարտվի հաջորդող երեսուն (30) օրերի ընթացքում՝ միջնորդության պահանջքը ստացվելուց հետո, բացի այն պարագային երբ երկու կողմերը համաձայնվում են հետաձգել ժամկետը: Եթե հարցը լուծվում է, կողմերը պետք է ձևակերպեն օրինական գրավոր համաձայնագիր, որը կվավերացնի համաձայնությունը: Միջնորդության ընթացքի բոլոր քննարկումները պետք են մնալ գաղտնի: Բոլոր նախալսումի միջնորդության ժողովները պետք է արագընթաց տեղի ունենան և ժամն ու տեղը պետք է հարմար լինի բոլոր կողմերին: Եթե հարցերը չեն լուծվում բոլոր կողմերի բավարարությամբ, այն կողմը որ միջամտության ժողով էր պահանջել, օրինական լսում պահանջելու կարելիությունը ունի: (EC 56500.3 and 56503)

Օրինական Լսումի Իրավունք

Ի՞նչ են օրինական լսումի իմ իրավունքները:

Դուք իրավունք ունեք՝

1. Ունենալ արդար և անկողմնապահ վարչական լսում նահանգային մակարդակով, հատուկ ուսուցման օրենքներից տեղյակ անձի առաջ, ինչպես նաև այլ վարչական լսումներ (20 USC 1415[f][1][A], 1415[f][3][A]-[D]; 34 CFR 300.511; EC 56501[b][4]);
2. Ընկերակցվելու և խորհուրդ ստանալու իրավաբանի կողմից, և կամ հաշմանդամ երեխաների մասին տեղյակ անհատի կողմից (EC 56505 [e][1]);
3. Ներկայացնել փաստ, գրավոր փաստարկներ, և բանավոր փաստարկներ (EC 56505[e][2]);
4. Դիմակայել, հարցափորձել, և պահանջել որ վկաներ ներկա լինեն (EC 56505[e][3]);
5. Ստանալ գրավոր, կամ ըստ ծնողքի ցանկության՝ լսումի էլեկտրոնային բանավոր ձայնագրությունը, ներառյալ տեղեկությունների հայտնաբերումը և կայացված որոշումները (EC 56505[e][4]);
6. Ձեր զավակը ներկա լինի լսումին (EC 56501[c][1]);
7. Որոշել եթե ուզում եք լսումը բաց լինի հանրությանը, թե փակ (EC 56501[c][2]);
8. Լսումից նախորդող հինգ (5) աշխատանքային օրերի ընթացքում, ստանալ բոլոր փաստաթղթերի պատճենները, ներառյալ մինչև այդ ժամանակ ամբողջացված գնահատումները և առաջարկությունները, վկաների ցանկը և իրենց վկայության մոտավոր բնույթը (EC 56505[e][7] and 56043[v]);
9. Լսումից առնվազն տասը (10) օր առաջ, դեմի կողմերից տեղեկություն ստանալ հարցերի և արաջարկված լուծումների մասին (EC 56505[e][6]);
10. Թարգմանիչ ունենալ (CCR 3082[d]);
11. Խնդրել հետաձգել լսումի ժամկետը (EC 56505[f][3]);
12. Օրինական լսումի ընթացքում ունենալ միջնորդության ժողով (EC 56501[b][2]), և,
13. Լսումի օրվից առնվազն տաս (10) օր առաջ, տեղեկացում ստանալ դեմի կողմից որ դիմացի կողմը ծրագրում է իրավաբանով ներկայանալ (EC 56507[a]). (20 USC 1415[e]; 34 CFR 300.506, 300.508, 300.512 and 300.515).

Գրավոր Օրինական Գանգատ Ներկայացնել

Ի՞նչպես եմ կարող օրինական լսում պահանջել

Օրինական լսումի համար, դուք պետք է գրավոր պահանջք ներկայացնեք: Դուք կամ ձեր ներկայացուցիչը ձեր պահանջքում պետք էք նշել հետևյալ տեղեկությունները՝

1. Երեխայի անունը,
2. Երեխայի բնակարանի հասցեն,
3. Երեխայի հաճախած դպրոցը,
4. Անտունի երեխայի պարագային, երեխայի հետ կապվելու առկա տեղեկություն և երեխայի հաճախած դպրոցի անունը, և՝
5. Բացատրություն խնդրի մասին, ներառյալ խնդիրների հետ կապված իրողություններ և առաջարկված լուծումներ:

Դաշնային և նահանգային օրենքները պահանջում են որ օրինական լսում պահանջող որևէ կողմ, պետք է գրավոր պահանջքի պատճենը տա դիմացի կողմին: (20 USC 1415[b][7], 1415[c][2]; 34 CFR 300.508; EC 56502[c][1])

Նախքան օրինական լսում պահանջելը, դպրոցի դիսթրիքթին առիթ պետք է տրվի հավաք գումարել՝ հարցը լուծելու համար: Դա մի ժողով է ծնողների և IEP խմբի անդամների միջև, որոնք ունեն հատուկ տեղեկություններ այն տվյալների մասին, որոնք նշվել են օրինական լսումի պահանջքի մեջ: (20 USC 1415[f][1][B]; 34 CFR 300.510)

Խնդիրներ լուծելու ժողովը ի՞նչից է բաղկացած

Խնդիրներ լուծելու ժողովը պետք է կայանա ծնողի օրինական լսումի պահանջքը ստանալուց հաջորդող տասնհինգ (15) օրերի ընթացքում: Ժողովում պետք է ներկա լինի՝ որոշում կայացնելու իրավասություն ունեցող դպրոցի դիսթրիքթից մի ներկայացուցիչ, սակայն ոչ դիսթրիքթը ներկայացնող իրավաբան, բացի այն պարագային երբ ծնողքին էլ է ներկայանում իրավաբանով: Երեխայի ծնողքը կարող է քննարկել օրինական լսումի հարցերը և տվյալները, որոնք հիմք են կազմում օրինական լսումի պահանջքին:

Հարցեր լուծելու ժողովի կարիք չի լինի երբ ծնողը և դպրոցի դիսթրիքթը գրավոր համաձայնվեն հրաժարվել ժողովից: Եթե դպրոցի դիսթրիքթը օրինական լսումի հարցը չի լուծել երեսուն (30) օրերի ընթացքում, ապա կարող է տեղի ունենա օրինական լսում: Եթե կայանում է համաձայնություն, ծնողները պետք է լրացնեն օրինական համաձայնագիր: (20 USC 1415[f][1][B]; 34 CFR 300.510)

Այս ընթացքում, երեխայիս տեղադրումը կարող է փոխվի՞

Այն երեխան որ մաս է կազմում վարչական կամ օրինական մի ընթացքի, պետք է մնա ներկայ ուսումնական վայրում, բացի եթե դուք և դպրոցի դիսթրիքթը համաձայնվում եք մի այլ կարգադրության: Եթե դուք առաջին անգամ եք հանրային դպրոց դիմում ձեր զավակի համար, ձեր զավակը կտեղադրվի հանրային ուսումնական մի ծրագրում՝ ըստ ձեր համաձայնության, մինչև բոլոր գործողությունները ավարտվեն: (20 USC 1415[j]; 34 CFR 300.518; EC 56505[d])

Կարելի՞ է որոշումը վերաքննել

Լսումի որոշումը վերջնական և պարտադիր է բոլոր կողմերի համար: Յուրաքանչյուր կողմ կարող է լսումի որոշումները վերաքննելու դիմում կատարել քաղաքացիական գործ հարուցելով նահանգային կամ դաշնային դատարանում՝ վերջին որոշումից հաջորդող իննսուն (90) օրերի ընթացքում: (20 USC 1415[i][2] and [3][A], 1415[l]; 34 CFR 300.516; EC 56505[h] and [k], EC 56043[w])

Իմ իրավաբանական ծախսերը ո՞վ է վճարելու:

Օրինական լսումի հետ կապված որևէ գործողության կամ ընթացքի ժամանակ, եթե դուք եք հաղթող կողմը, դատարանը, իր որոշումով, կարող է չափավոր մի գումար նշանակի ձեր իրավաբանական ծախսերի համար՝ իբր հաշմանդամ երեխայի ծնողի ծախսերի մի մասը: Չափավոր իրավաբանական գումարներ կարող են նաև որոշվել վարչական լսումի ավարտին, եթե բոլոր կողմերը համաձայնվեն: (20 USC 1415[i][3][B]–[G]; 34 CFR 300.517; EC 56507[b])

Գումարները կարող են պակսեցվել եթե հետևյալ հանգամանքներից որևէ մեկը գոյություն ունենա՝

1. Դատարանը գտնում է որ դուք անտեղի հետաձգել եք բանավեճի վերջնական լուծումը,
2. Իրավաբանի ժամական ծախսերը ավելի են քան համայնքում ընդունված նույնանման սպասարկությունների համար նույնանման կարողություն և փոռձարությաուն ունեցող իրավաբանների ծախսերից,
3. Ժամը և հայթայթված իրավաբանական սպասարկությունները անտեղի չափազանց են,
4. Ձեր իրավաբանը դպրոցի դիսթրիքթին ճիշտ տեղեկություն չի տվել, օրինական լսումի համար պահանջված թղթերի մեջ:

Սակայն, իրավաբանական ծախսերը չեն կարող պակսեցվել եթե դատարանը գտնի որ նահանգը կամ դպրոցի դիսթրիքթը անտեղի հետաձգել են գործի վերջնական լուծումը, կամ էլ այս հարցերի հետ առնչված օրենքների խախտում է եղել: (20 USC 1415[i][3][B]–[G]; 34 CFR 300.517)

Իրավաբանական ծախսերը՝ որոնք առնչված են IEP-ի խմբի հետ կայացած որևէ ժողովներին, չեն տրվելու, բացի այն պարագային, երբ IEP-ի խմբի ժողովը կայացել է օրինական լսումի կամ դատական գործի պատճառով: Իրավաբանական ծախսերը նաև կարող են մերժվել եթե դուք մերժեք լուծումի մի որոշակի առաջարկություն դիսթրիքթի կամ հանրային մարմինի կողմից, լսումը սկսելուց տասը (10) օր առաջ, և եթե լսումի վճիռը առաջարկվածից ավելի դրական չէ: (20 USC 1415[i][3][B]–[G]; 34 CFR 300.517)

Հավելյալ տեղեկությունների համար, կամ միջնորդության դիմելու համար, կամ էլ օրինական լսումի համար, կապվեք՝

Office of Administrative Hearings
Attention: Special Education Division
2349 Gateway Oaks Drive, Suite 200
Sacramento, CA 95833-4231

(916) 263-0880
FAX (916) 263-0890

Հաշմանդամ Աշակերտների Դպրոցական Կարգապահությունը և Տեղադրման Ընթացակարգը

Դպրոցական Կարգապահություն և Միջանկյալ Այլ Ուսումնական Շրջապատ

Իմ երեխան կարո՞ղ է կախակալվի կամ վտարվի

Դպրոցի աշխատակազմը կարող է նկատի առնել որևէ յուրահատուկ հանգամանքներ՝ դեպքի հետ կապված՝ աշակերտական վարմունքի օրենքները խախտող հաշմանդամ աշակերտի նկատմամբ, որոշելու եթե տեղադրումի փոփոխությունը հարմար կլինի ներկա կարգավիճակից դեպի՝

- Մի այլ հարմար միջանկյալ ուսումնական շրջապատ, կամ այլ շրջապատ, կամ էլ կախակալում՝ բայց ոչ ավելի քան տասը (10) շաբաթանվազ դպրոցական օրից, և,
- Հավելյալ հեռացում՝ բայց ոչ ավելի քան տասը (10) շաբաթանվազ դպրոցական օրից, նույն դպրոցական տաեշրջանում, զանազան սխալ արարքների համար:

Ի՞նչ կպատահի տասը օրից ավելի հեռացումից հետո:

Երբ հաշմանդամ երեխան իր ներկա տեղադրումից հեռացվել է՝ տասը (10) դպրոցական օր նույն դպրոցաշրջանում, հաջորդող հեռացված օրերին, հանրային գործակալությունը պետք է սպասարկություններ հայթայթի որպեսզի երեխան կարողանա շարունակել մասնակցել ընդհանուր ուսումնական ծրագրին և հառաջանա ու լրացնի այն նպատակները՝ որոնք նկարագրվել են երեխայի IEP-ում: Նաև, ըստ պահանջի, երեխան կստանա գործնական վարմունքի միջամտության սպասարկություն և այլ փոփոխություններ, որոնք ծրագրվել են վարմունքի խախտումները ուղղել որպեսզի դրանք նորից չկրկնվեն:

Եթե երեխան տասը (10) օրից ավել է մնում նման տեղադրամասում, IEP ժողով պետք է կայացվի որոշելու եթե երեխայի արարքը նրա հաշմանդամության հետևանքն է թե ոչ: Այս IEP ժողովը պետք է անմիջապես տեղի ունենա, եթե դրա կարելիությունը կա, կամ էլ հաջորդող տասը օրերի ընթացքում՝ այն օրից երբ դպրոցի դիսթրիքթը որոշել է կարգապահական այդ քայլը վերցնել:

Իբր ծնող, դուք կհրավիրվեք մասնակցելու իբր IEP-ի խմբի մի անդամը: Դպրոցի դիսթրիքթը կարող է ստիպվի գնահատումի մի ծրագիր մշակել՝ ստույգելու վարքի խախտումը, կամ եթե ձեր զավակը ունի վարմունքի միջամտության մի ծրագիր, ուսումնասիրել դա և փոփոխել ծրագիրը ըստ պահանջի:

Ի՞նչ կպատահի եթե IEP-ի խումբը որոշի, որ խախտումը հաշմանդամության պատճառով չի եղել:

Եթե IEP-ի խումբը եզրակացնի որ խախտումը երեխայի հաշմանդամության դրսևորումը չի, դպրոցի դիսթրիքթը կարող է ուղղիչ քայլեր վերցնել, ինչպես օրինակ՝ հեռացում, այնպես

ինչպես պիտի լինե՞ր ոչ-հաշմանդամ երեխայի հետ: (20 USC 1415[k][1] և [7]; 34 CFR 300.530)

Եթե դուք համաձայն եք IEP-ի խմբի որոշումներին, կարող եք շտապ օրինական լսում պահանջել, որը պետք է տեղի ունենա ձեր խնդրելուց հաջորդող քսան (20) դպրոցական օրերի ընթացքում: (20 USC 1415[k][2]; 34 CFR 300.531[c])

Անկախ միջավայրից, դպրոցի դիսթրիքթը պետք է շարունակի ձեր զավակին FAPE հայթայթել: Այլ ուսումնական միջավայրերը պետք են երեխային արտոնել որ նա կարողանա մասնակցել ընդհանուր դասընթացներին և ապահովել շարունակական սպասարկություններ, ինչպես նաև IEP-ի մեջ նշված փոփոխությունները: (34 CFR 300.530; EC 48915.5[b])

Մասնավոր (Private) Դպրոց Հաճախող Երեխաներ

Այն երեխաները ովքեր ծնողների ցանկությամբ տեղադրվել են մասնավոր դպրոցներում, կարող են մասնակցել հանրային ֆինանսավորված հատուկ ուսուցման ծրագրերում:

Երեխաներ ովքեր ծնողների կողմից գրանցվել են մասնավոր դպրոցներում, կարող են մասնակցել հանրային ֆինանսավորված հատուկ ուսուցման ծրագրերում: Դպրոցի դիսթրիքթը պետք է մասնավոր դպրոցների և ծնողների հետ խորհրդակցի, որոշելու համար սպասարկությունները որոնք կառաջարկվեն մասնավոր դպրոց հաճախող աշակերտներին: Հակառակ որ դպրոցի դիսթրիքթները հստակ պարտավորվածություն ունեն FAPE առաջարկելու հաշմանդամ աշակերտներին, այն երեխաները ովքեր իրենց ծնողների կողմից տեղադրվում են մասնավոր դպրոցներ, իրավունք չունեն հատուկ ուսուցում և առնչված սպասարկություններ ստանալու՝ մասամբ կամ ամբողջությամբ, որոնք անհրաժեշտ են FAPE-ի համար: (20 USC 1415[a][10][A]; 34 CFR 300.137 and 300.138; EC 56173)

Եթե ծնողը որի երեխան յուրահատուկ կարիքներ ունի և նախապես ստացել է հատուկ ուսուցում և առնչված սպասարկություններ համաձայն դիսթրիքթի իրավասությանը, առանց տեղական ուսումնական մարմնի իրավասությանը եթե երեխան գրանցի մասնավոր տարրական կամ երկրորդական դպրոց, դիսթրիքթը ստիպված չէ հատուկ ուսուցում հայթայթել՝ երբ դիսթրիքթը FAPE առաջարկել է: Դատարանը կամ օրինական ընթացքի պատասխանատուն կարող են դիսթրիքթին ստիպել, որ նա ծնողին կամ խնամակալին՝ փոխհատուցի հատուկ ուսուցման և մասնավոր դպրոցի ծախսերը, միմիայն այն պարագային՝ երբ նրանք գտնում են որ դիսթրիքթը երեխային ժամանակին FAPE չի առաջարկել, մասնավոր տարրական կամ երկրորդական դպրոց գրանցվելուց առաջ, և որ մասնավոր դպրոցի տեղադրումը ճիշտ քայլն է եղել: (20 USC 1412[a][10][C]; 34 CFR 300.148; EC 56175)

Ե՞րբ կարող են փոխհատուցումները նվազեցվեն կամ մերժվեն:

Դատարանը կամ լսումի պատասխանատուն կարող են փոխհատուցումը նվազեցնել կամ մերժել՝ այն պարագային երբ դուք դպրոցի դիսթրիքթից ծանուցում ստանալուց հետո, ձեր զավակին չեք ներկայացրել գնահատվելու, նախքան ձեր զավակին դուրս բերեք հանրային դպրոցից: Ձեզ փոխհատուցում նաև կմերժվի եթե դուք դիսթրիքթին տեղյակ չեք պահել որ

մերժում էք նրան առաջարկած հատուկ ուսուցման տեղադրումը, ներառյալ՝ հաղորդել ձեր մտահոգությունները և ձեր նպատակը ձեր երեխային գրանցել մասնավոր դպրոց հանրության ծախսերով:

Դիսթրիքթին ձեր ծանուցումը պետք է տրվի կամ՝

- ամենավերջի IEP ժողովում որ մասնակցել էք, նախքան ձեր զավակը հանրային դպրոցից դուրս բերելը, կամ,
- գրավոր, դիսթրիքթին, առնվազն տասը (10) աշխատանքային օր առաջ (ներառյալ արձակուրդներ) նախքան ձեր զավակը դուրս բերեք հանրային դպրոցից: (20 USC 1412[a][10][C]; 34 CFR 300.148; EC 56176)

Ե՞րբ կարող է փոխհատուցումը կնվազի կամ չմերժվի:

Դատարանը կամ լսումի պատասխանատուն պետք չե նվազեցնի կամ մերժի ձեզ փոխհատուցումը՝ եթե դուք դիսթրիքթին գրավոր ծանուցում չեք տվել հետևյալ պատճառներով.

- Դպրոցը արգելել է ձեզ ծանուցում տալուց,
- Դուք այս «Ընթացակարգային Երաշխիքների Ծանուցում»ի պատճենը չեք ստացել կամ ձեզ մի այլ ձևով չեն տեղեկացրել դիսթրիքթին տեղեկացնելու պահանջները,
- Ծանուցում ներկայացնելը շատ հավանությամբ, ձեր զավակին ֆիզիքական վնաս էր հասցնելու,
- Անգրագիտությունը կամ Անգլերենով լեզվով գրելու անկարողությունը ձեզ արգելել է ծանուցում ներկայացնելուց, կամ,
- Ծանուցում ներկայացնելը հավանական է որ ձեր զավակին հոգեկան վնաս էր հասցնելու:

(20 USC 1412[a] [10] [C]; 34 CFR 300.148; EC 56177)

Նահանգին Գանգատվելու Ընթացակարգը

Ե՞րբ կարող եմ նահանգին գանգատ ներկայացնել:

Դուք կարող եք նահանգին գանգատ ներկայացնել երբ հավատում եք որ դիսթրիքթը խախտել է դաշնային կամ նահանգային հատուկ ուսուցման օրենքները: Ձեր գրավոր գանգատը պետք է նշի առնվազն մի հատ դաշնային կամ նահանգային հատուկ ուսուցման օրենքների ենթադրված խախտում: Խախտումը պետք է պատահած լինի գանգատը Քալիֆոռնիայի Կրթական Նախարարությունում (CDE) ստացվելուց ոչ մի տարուց ավել: Երբ գանգատ եք ներկայացնում, գանգատի մի պատճեն պետք էք ուղարկել դպրոցի դիսթրիքթին, նույն ժամանակ երբ նահանգի օրենքների խախտումը ներկայացնում եք CDE-ին: (34 CFR 300.151–153; 5 CCR 4600)

Գանգատներ որոնք մեղադրում են դաշնային և նահանգային հատուկ ուսուցման օրենքների խախտում, պետք են ուղարկվել հետևյալ հասցեին.

California Department of Education

Special Education Division
Procedural Safeguards Referral Service
1430 N Street, Suite 2401
Sacramento, CA 95814

Դաշնային կամ նահանգային հատուկ ուսուցման օրենքներին **չվերաբերող** գանգատների համար, խորհրդակցեք ձեր դիտորիքի ընդհանուր գանգատների ընթացակարգը:

Խնդիրներ լուծելու մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար, ներառյալ ինչպես գանգատ ներկայացնել, կապվեք CDE, Special Education Division, Procedural Safeguards Referral Service, հեռախոս՝ (800) 926-0648, ֆաքս՝ 916-327-3704, կամ այցելելով CDE-ի կայքը՝ <http://www.cde.ca.gov/sp/se>.

Ծանուցումում Գործածված Հասպակումների Բառարան

ADR	Alternative Dispute Resolution (Խնդիրների Այլ Լուծում)
CFR:	<i>Code of Federal Regulations (Դաշնային Օրենքների Օրենսգիրք)</i>
EC	<i>California Education Code (Քալիֆորնիայի Ուսումնական Օրենսգիրք)</i>
FAPE	Free Appropriate Public Education (Զրի Պատշաճ Հանրային Ուսում)
IDEA	Individuals with Disabilities Education Act (Հաշմանդամ Անհատների Ուսումնական Հրամանագիր)
IEP	Individualized Education Program (Անհատական Ուսումնական Ծրագիր)
OAH:	Office of Administrative Hearings (Վարչական Լսումների Գրասենյակ)
SELPA:	Special Education Local Plan Area (Հատուկ Ուսումի Տեղական Ծրագրի Վայր)
USC:	<i>United States Code (Միացյալ Նահանգների Օրենսգիրք)</i>

Ծնողական Իրավունքների Ծանուցում

Այս տեղեկությունը ձեզ՝ իբր ծնող, օրինական խնամակալ, կամ փոխանորդ ծնող՝ երեք (3) տարեկանից մինչև քսանմեկ (21) տարեկան հաշմանդամ երեխաների համար, ինչպես նաև աշակերտներ ովքեր տասնութ (18) տարեկան են դարձել, այսինքն՝ չափահասության տարիք (այսու «Ծնողներ»), համառոտ կերպով ամփոփում է հատուկ ուսուցում ստացող հաշմանդամ աշակերտների Երաշխիքների Ընթացակարգը:

Երեխայի դիսթրիքթի և հատուկ ուսումի տեղական ծրագրի վայրի (SELPA) աշխատակազմից ոմանք կարող են պատասխանել երեխայի ուսման և ծնողների իրավունքների և պատասխանատվությունների մասին հարցերին: Երբ ծնողը մտահոգություն է ունենում, կարևոր է որ նա կապվի երեխայի ուսուցիչներին կամ դպրոցի կառավարիչներին, նրանց հետ խօսելու համար իր գավկի մասին և որևէ խնդիրների մասին որ նկատում է: Այսպիսի խոսակցություն ընթացողից խնդիրը կլուծի և կօգնի բաց հաղորդակցության պահպանումը:

Ծնողներին պետք է առիթ տրվի մասնակցել որևէ որոշում կայացնող ժողովներին կապված իրենց գավկի հատուկ ուսուցման ծրագրի հետ: Ծնողները իրավունք ունեն մասնակցելու անհատական ուսման ծրագրի (IEP) ժողովներին, իրենց գավկի հատուկ ուսուցման իրավասությանը, գնահատմանը, տեղադրմանը և այլ հարցերի մասին որոնք առնչվում են իրենց գավկի՝ հարմար, հանրային ուսումին (FAPE) հետ:

Երբ ծնողը չի հայտնաբերվում կամ գտնվում, դիսթրիքթը հաշմանդամ երեխային իբր ներկայացուցիչ, կարող է փոխանորդ ծնող նշանակի:

Ի՞նչ են Քալիֆորնիայի Հատուկ Ուսուցումի Ծնողական Իրավունքները:

Ծնողներ և աշակերտներ (տասնութ տարեկանից վեր) իրավունք ունեն՝

Մասնակցել

Ծնողներս իրավունք ունեն իրենց գավկը գրանցել հատուկ ուսուցման սպասարկությունների, ինչպես նաև մասնակցել IEP ծրագրի մշակմանը և տեղեկացվել ծրագրի բոլոր կարելիությունների և այլ միջոցների մասին, լինեն նրանք հանրային կամ ոչ հանրային:

Նախապես Ստանալ Գրավոր Ծանուցում

Ծնողները իրավունք ունեն նախապես գրավոր ծանուցում ստանալ, իրենց մայրենի լեզվով, երբ դպրոցի դիսթրիքթը նախաձեռնում կամ մերժում է իրենց դիմումը, նախաձեռնելու փոփոխություն է կայացնում իրենց գավկի հաստատումին, գնահատումին կամ հատուկ ուսուցումի տեղադրմանը:

Թույլտվություն Տալու

Նախքան իրենց գավկի գնահատվելը կամ հատուկ ուսումի սպասարկություն ստանալը, ծնողները պետք են տեղյակ, գրավոր թույլտվություն տալ: Ծնողական թույլտվություն պետք է

տրվի նաև նախքան հատուկ ուսուցման սպասարկության մեջ որևէ փոփոխություն տեղի ունենա: Դիսթրիքթը պետք է հաստատի որ ծնողները հասկանում են IEP խմբի ժողովի ընթացակարգը, ներառյալ թարգմանիչ կարգադրել այն ծնողների համար՝ ովքեր լսողության դժվարություն ունեն կամ Անզլերենից բացի մի այլ լեզու են խոսում:

Թույլտվություն Մերժել

Ծնողներ կարող են մերժել որ իրենց զավակը գնահատվի կամ տեղադրվի հատուկ ուսուցումի ծրագրում:

Ստանալ Ոչ-Խտրական Գնահատում

Հատուկ ուսուցման համար, երեխաները պետք է գնահատվեն այնպիսի միջոցներով, որոնք մշակութային առումով կողմնակցական կամ խտրական չեն:

Ստանալ Ուսումնական Անկախ Գնահատում

Եթե ծնողները չեն համաձայնվում դպրոցի դիսթրիքթի կատարած գնահատումի արդյունքներին, իրավունք ունեն խնդրել և ստանալ անկախ ուսումնական գնահատում (IEE) հանրության ծախսով:

Ծնողները հանրության ծախսով միայն մեկ հատ IEE ստանալու իրավունք ունեն, յուրաքանչյուր անգամ որ հանրային գործակալությունը գնահատում է կատարում որին ծնողը չի համաձայնվում:

Երբ ծնողը հանրության ծախսով IEE է պահանջում, դպրոցի դիսթրիքթը պետք է առանց անտեղի ուշացումի, կամ ապահովի որ IEE-ն կատարվում է հանրության ծախսով, կամ էլ պահանջի որ օրինական լսում տեղի ունենա՝ այն պարագային երբ դիսթրիքթը հավատում է որ գնահատումը ճիշդ է և չի համաձայնվում որ IEE-ի կարիքը կա: Դպրոցի դիսթրիքթը իրավունք ունի նաև հաստատելու հանրային ծախսերով կատարված IEE-ների չափանիշները (ներառյալ ծախսը և վայրը):

Իրավունք Ունենալ Տեսնելու Ուսումնական Բեկորտները

Ծնողները իրավունք ունեն իրեց զավակի բեկորտները ստուգելու, վերանայելու և պատճենները ստանալու:

Մնալ Ներկա Ծրագրում Եթե Տեղադրումի Առնչությամբ Կա Անհամաձայնություն

Եթե ծնողները չեն համաձայնվում դիսթրիքթի հետ իրենց զավակի հատուկ ուսուցման տեղադրումի առնչությամբ, կամ առաջարկված տեղադրումի փոփոխությանը, օրենքը պահանջում է որ աշակերտը «մնա» ներկա ծրագրում մինչև հարցի լուծվելը:

Չհամաձայնվելու Պարագային, IEP-ի Առնչությամբ Լսում Ստանալ

Ծնողները իրավունք ունեն իրենց զավակի համար գանգատ ներկայացնելու FAPE-ի հասանելիությանը կապակցությամբ, օրինական լսումի ներկայանալ իրավաբանով,

պաշտպանով, ինչպես նաև աշակերտի հետ, եթե դա պատշաճ է, և լսումը բաց պահել հանրության: Որոշ պարագաներին, լսումի պաշտոնյան հարցերին իբր լուծում, կարող է պարզեվատրի, պակասեցնի կամ մերժի ծնողների իրավաբաններին վճարած գումարները, ինչպես նաև գումարներ որոնք վճարվել են ոչ հանրային հիմնարկներին: Օրինական լսում պահանջելու համար, կամ օրինական լսումների մասին ընթացակարգային երաշխիքների ամբողջ ծանուցումը ստանալու համար, կապվեք՝ Office of Administrative Hearings (կապվելու տեղեկությունները ներքևում):

Ստանալ Միջնորդություն

Ծնողներ քաջալերվում են իրենց զավակի հատուկ ուսուցման հետ առնչված խնդիրները լուծել կամավոր միջնորդության միջոցով, որը մի ընթացք է ուր կողմերը անկողմնակալ միջնորդի օգնությամբ, բոլոր կողմերին ընդունելի լուծումի են հասնում: Ծնողները կարող են միջնորդություն խնդրել առանձին կամ օրինական լսումից անկախ: Միջնորդությունը չի կարող գործածվել հետաձգելու ծնողների օրինական լսումի իրավունքները:

Ներկայացնել գանգատ՝ Ձեր Դպրոցի Դիսթրիքթին Դեմ

Եթե ծնողները հավատում են որ իրենց զավակի դպրոցի դիսթրիքթը օրենք է խախտել, կարող են բողոք ներկայացնել Քալիֆորնիայի Կրթության Նախարարությանը: Նախարարությունը պետք է քննարկի ենթադրված IDEA-ի օրենքների խախտումները, նշի հատուկ ուսումնական օրենքներ, և թողարկի գրավոր վճիռ, բողոքը ստանալուց հաջորդող 60 օրերի ընթացքում:

Տեղյակ Պահվել՝ Դպրոցի Կարգապահության և Այլ Տեղադրումի Մասին

IEP ունեցող աշակերտների կախակայումի և հեռացումի առնչությամբ, կան հատուկ օրենքներ: Ընդհանրապես, հաշմանդամ աշակերտը կարող է կախակայվի կամ այլ ուսումնական շրջապատում տեղադրվի, ինչպես ոչ հաշմանդամ մի աշակերտ:

Եթե հաշմանդամ աշակերտը այսպիսի մի տեղադրում է ունենում տասը օրից ավելի, IEP ժողով պետք է գումարվի որոշելու երեխայի ներկա տեղադրումի պատշաճությունը, և ինչքանով նրա հաշմանդամությունն է որ պատճառել է խախտումը: Անկախ երեխայի տեղադրումից, դիսթրիքթը պետք է FAPE հայթայթի:

Տեղեկացվել՝ Մասնավոր Դպրոց Հաճախող Երեխաների Օրենքների Մասին

Դպրոցի Դիսթրիքթները պատասխանատու են հայտնաբերելու և գնահատելու հաշմանդամ աշակերտներ ովքեր իրենց ծնողների կողմից արձանագրվել են մասնավոր դպրոցներում: Սակայն, դպրոցի դիսթրիքթները ստիպված չեն հատուկ ուսուցում հայթայթել կամ առնչված սպասարկություններ տալ այս աշակերտներին: Սպասարկության իրավունք չկա, հակառակ որ մի կարգ մասնավոր դպրոցներ և աշակերտներ ովքեր հաճախում են մասնավոր դպրոցներ, կարող են մի քանի սպասարկություններ ստանալ դիսթրիքթից:

Հավելյալ Ռեսուրսներ

Այս ծանուցումը համառոտ ամփոփում է ընթացակարգային երաշխիքներին ըստ դաշնային և նահանգային օրենքների (20 USC Section 1412(d); 34 CFR 300.504; EC

sections 56301(d)(2), 56321, և 56341.1(g)(1)). Ծնողների և Երեխաների Հատուկ Ուսուցման Իրավունքները (Special Education Rights of Parents and Children), որը այս իրավունքների մի ավելի ծավալուն բացատրությունն է, կարելի է ստանալ Քալիֆորնիայի Կրթական Նախարարությունից, Հատուկ Ուսուցման Բաժնից (California Department of Education, Special Education Division):

Ծնողական իրավունքների և խնդիրներ լուծելու մասին տեղեկություններ ստանալու համար, ներառյալ ինչպես գանգատ ներկայացնել՝ կապվեք Քալիֆորնիայի Կրթական Նախարարությունը (California Department of Education), Special Education Division, Procedural Safeguards Referral Service, հեռախոսելով՝ 800-926-0648 կամ գրավոր՝

California Department of Education
Special Education Division
Procedural Safeguards Referral Service
1430 N Street, Suite 2401
Sacramento, CA 95814
Telephone: 800-926-0648
Fax:916-327-3704

Ծանուցում, Մեդի-Քալի Վճառումների Ծրագրում Դիսթրիբյուցի Մասնակցության Մասին

Դիսթրիբյուցի, գործակցությամբ Քալիֆորնիայի Առողջապահական և Կրթական Բաժանմունքներին, մասնակցում է մի ծրագրում, որը իրավունք է տալիս դիսթրիբյուցի վճարվել դաշնային Մեդիքեյդի պլանից մի շարք առողջապահական սպասարկությունների համար որոնք տրվել են Մեդի-Քալ ունեցող աշակերտներին դպրոցում: Այս ծրագրից ստացված գումարը ներդրվում է ծավալելու և բարելավելու առողջական և սոցիալական սպասարկությունները բոլոր աշակերտների համար:

Նահանգային և դաշնային օրենքների և ուղեցույցների համաձայն, ձեզ տեղեկացնում ենք որ ձեր աշակերտի ռեկորտներից մի շարք տեղեկություններ կարող են ազատ արձակվել Paradigm Healthcare Services, LLC-ին, որը մեր դրամական հարցերը զբաղվող գործընկերն է, ինչպես նաև Department of Health Care Services (DHCS), միայն պահանջարքների նպատակով (և ձեր գավակի Մեդի-Քալի նպաստները կարող են բաժանատվել): Այս տեղեկությունը կբացահայտվի միմիայն այն պարագային, երբ մենք ստացել ենք ձեր թույլտվությունը: Ձեր թույլտվությունը կարող է արդեն տված լինել երբ դուք ձեր աշակերտին դպրոց եք արձանագրել, դպրոց վերադառնալու թղթերի իբր մի մասը, կամ IEP/IFSP-ի մշակումի և վերանայումի ընթացքում (եթե դա տեղի է ունեցել):

Բոլոր տեղեկությունները որոնք բաժնվում են ուրիշների հետ կողմնորված են և ուղարկվում են ապահով միջոցներով՝ թե մեր աշխատակիցներին և թե DHCS-ին: Ուսումնական ռեկորդները որոնք կարող են ազատ արձակվել իբր արդյունք այս ծրագրում մեր մասնակցությանը, ներառում են հետևյալները.

Աշակերտի անունը, ծննդյան թիվը, և առողջության հետ կապված գնահատումը, միջամտությունը և հանձնարարելու տեղեկությունները (այն սպասարկություններին որոնք ստացել են դպրոցում):

Պատասխանատուի գրառումները առնչված այս առողջական սպասարկություններին, ինչպես նաև մի կարգ տվյալներ երեխայի IEP/IFSP-ից (եթե դա կիրառելի է):

Դուք իրավունք ունեք որևէ ժամանակ ձեր աշակերտի տեղեկությունները բացահայտվելու թույլտվությունը հետ վերցնել: Ազատ զգացեք այցելել ձեր դպրոցի գրասենյակը քննարկելու այս ծրագիրը: **Խնդրեմ նկատի ունեցեք որ՝ ձեր թույլտվություն տալու կամ չտալու պատճառով, աշակերտները չպիտի արգելվեն դպրոց հաճախելուց և ծնողները չպիտի ստիպվեն հայթայթված սպասարկությունների համար վճարել:** Նաև, հակառակ որ դիսթրիբյուցի վճարվում է Մեդի-Քալից մի շարք սպասարկությունների համար, ձեր գավակի Մեդի-Քալի նպաստները պետք չեն որևէ ձևով ազդվեն: Բացի այդ, մինչդեռ որ Մեդի-Քալը փոխհատուցում է որոշ առողջապահական սպասարկությունների համար, ձեր երեխայի Մեդի-Քալի նպաստները պետք չեն որևէ ձևով ազդվեն: Մենք այս ծրագրում մասնակցում ենք դաշնային կառավարությունից

Ֆինանսավորում ստանալ՝ Մեդի-Քալի համար, այն առողջապահական սպասարկությունների համար, որոնք արդեն իսկ հայթայթվում են դպրոցում, և այդ գումարները գործածել ընթացակելու սպասարկություններ որոնք առաջարկվում են բոլոր աշակերտությանը:

Հավելյալ նոթեր.

Գաղտնապահություն և Ինքնության Պահպանում: Դիսթրիքթի վճարումներ ստանալու հարցերով զբաղվող գործակալությունը, ըստ համաձայնության պարտավորվածության, ստիպված է աշակերտների ռեկորտների գաղտնապահությունը պահպանել, ապահովելով որ տեղեկությունները չեն գործածվում կամ բացահայտվում անպատշաճ ձևերով: Նաև, մեր գործընկեր գործակալությունը, ենթարկվում է HIPAA-ի օրենքներին: Առավել ևս, դիսթրիքթը և DHCS-ը համաձայնություն են կնքել, որը պարունակում է հատուկ օրենքներ առնչված այս ծրագրում տեղեկությունների գործածության մասին և գերիշող ապահովության օրենքների մասին:

Երրորդ Կողմի Պատասխանատվություն: Եթե ձեր աշակերտը արձանագրվել է Մեդի-Քալում և նույն ժամանակ ապահովագրվել է մի այլ ապահովագրության ընկերության կողմից, DHCS-ը կարող է փորձի ձեռք բերել երրորդ կողմի պատասխանատվություն, եթե նրանք վճարում են մեր ներկայացուցած պահանջքը՝ հիմնված դպրոցի կողմից: Այս պատահում է որովհետև երրորդ կողմի պատասխանատվության իրավունքներ տրվել են երբ ձեր Մեդի-Քալը հաստատվել է:

<p style="text-align: center;">Compliance Officers (Օրենքների Հետևելու Պատասխանատու)</p> <p style="text-align: center;">Director of Human Resources Pasadena Unified School District 351 S Hudson Ave Pasadena, CA 91101 626-396-3600 Ext. 88778</p>	<p style="text-align: center;">Custodians of Records (Ռեկորդների Պատասխանատու)</p> <p style="text-align: center;">Coordinator III, Family/District Resources Pasadena Unified School District 351 S Hudson Ave Pasadena, CA 91101 626-396-3600 Ext. 88341</p>
---	--

<p style="text-align: center;">Special Education Director & SELPA Director (Մասնագիտացված Ուսուցման Ծրագրերի և SELPA-ի Տնօրեն)</p> <p style="text-align: center;">351 S Hudson Ave Pasadena, CA 91101 626-396-3600 Ext. 88600</p>
--